ԱՌԱՋԻՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

ԴՊՐՈՑՈՒՄ ԱՀՕ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ

- Հաստատել դրական կապ աշակերտների և դպրոցի անձնակազմի միջև: Կապ հաստատել առանց ճնշումների և պարտադրանքների:
- Ընդլայնել ապահովության զգացումը և տրամադրել հուզական և ֆիզիկական կայունություն:
- Հանգստացնել և ուղղորդել գերհուզական վիճակում գտնվող աշակերտներին և ուսուցիչներին:
- Օգնել աշակերտներին և անձնակազմի անդամներին ճանաչել իրենց առաջնային կարիքները:
- Տրամադրել գործնական աջակցություն աշակերտներին և անձնակազմին՝ իրենց կարիքներն ուղղորդելու համար:
- Օգնել, որ աշակերտները և անձնակազմի անդամները կարողանան անմիջապես կապ հաստատել սոցիալական աջակցման կենտրոնների և ծառայությունների հետ:
- Աջակցել, որ աշակերտները, անձնակազմը և ծնողները ակտիվորեն ներառված լինեն վերականգնման փուլերում՝ արտակարգ իրավիճակն առավել ադապտատիվ և արդյունավետ հաղթահարելու համար:
- Հաստատել համապատասխան և հասանելի կապ աշակերտների, անձնակազմի, ծնողների, դպրոցական և հասարակական այլ կառույցների հետ, որոնք կարող են օգտակար լինել բարդ իրավիճակներում:

ԱՀՕ ՏՐԱՄԱՐԴՈՂԸ

Դպրոցական հոգեբանները հիմնականում կազմում են դպրոցի ԱՀՕ արձագանքման թիմի անդամ: Որպես դպրոցում ԱՀՕ իրականացնող պետք է տիրապետել հետևյալ հմտություններին՝

- Տիրապետել ԱՀՕ տրամադրելու բազային հմտություններին, անցած լինի ԱՀՕ իրականացման դասընթաց,
- Կարողանալ գնահատել աշակերտների, անձնակազմի և ծնողների մոտ արտակարգ իրավիճակի ազդեցության հետևանքները,
- Կարողանալ տրամադրել տարիքին համապատասխան աջակցություն,
- Տիրապետել տեղեկության հասանելի ռեսուրսների վերաբերյալ,
- Պատկերացնել՝ ինչպես է ԱՀՕ տրամադրումը ներառվում դպրոցական և համայնքային ընդհանուր համակարգում,
- Ուշադիր և հետևողական լինել սեփական դիմակայության և հուզականության հանդեպ, իրականացնել ինքնախնամք:

Այս նյութը ստեղծվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: